

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՕՇԱԿԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԼԸՃՅԱՆԻ
(1917—1992)

1992 թվականի հուլիսի 5-ին Էլ Քինտի (Իրաք) հիվանդանոցում իր մահկանացուն կնքեց Իրաքի հայոց թեմի երկարամյա հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Օշական ավագ քահանա Գլըճյանը:

Հանգուցյալ արժանապատիվ տեր հայրը ծնվել է 1917 թվականին Քերբուկում (Անդր Հորդանան), ավազանի անունով՝ Գրիգոր, վաղամեռիկ հոր անունով:

Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Սահակյան ազգային վարժարանում: Երկու տարի հետևել է ֆրանսիական ֆրերների քոլեջի դասընթացներին: Ընտանիքի ծանր պայմաններից ելնելով թողել է ուսումը և անցել աշխատանքի՝ միաժամանակ զբաղվելով ինքնազարգացմամբ: Այնուհետև ուսուցչական պաշտոն է վարել Պուրճ Համուտի Սահակյան վարժարանում, ապա նշանակվել նույն վարժարանի տնօրեն:

Երեք տարի եղել է Դամասկոսի հայոց Ս. Սարգիս եկեղեցու դպրապետ: Դամասկոսում և այլ վայրերում պաշտոնավարելու ընթացքում արժանապատիվ տեր հայրը միաժամանակ մասնակցել է մշակութային, գեղարվեստական և մարզական գործի զարգացման աշխատանքներին:

Անսալով իր կոչումի ձայնին և ընդառաջելով Քերբուկի (Իրաք) թաղական խորհրդի հրավերին, 1966 թվականի նոյեմբերի 19-ին, ձեռամբ երջանկահիշատակ Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանի, ձեռնադրվել է քահանա՝ վերանվանվելով Տ. Օշական քահանա:

Վեց տարի Քերբուկում իբրև հոգևոր հովիվ պաշտոնավարելուց հետո, 1973 թվականին տեղափոխվել է Բաղդադ:

1986 թվականին, քահանայական ձեռնադրության 20-ամյակի առթիվ, Իրաքի հայոց թեմի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի միջնորդությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արժանացել է ավագության պատվի և իրավունք ստացել կրելու ծաղկյա փիլոն:

Իր հոգևոր ծառայության իբրև գնահատանք Տ. Օշական ավագ քահանա Գլըճյանը արժանիորեն վայելել է Իրաքի հայ հավատավոր ժողովրդի սերն ու հարգանքը:

1992 թվականի հուլիսի 7-ին, երեքշաբթի օրը, կեսօրից հետո, ժամը 14-30-ին, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվեց Տ. Օշական ավագ քահանայի վերջին օծումը և հուղարկավորությունը, իսկ ազգային նոր գերեզմանատանը կատարվեց հանգուցյալի թաղման արարողությունը, որտեղ և ամփոփվեց նրա աճյունը:

Երկնային խաղաղություն տեր հոր հոգուն: